

ՄԵԼԿ

Տարեկան 10 րոպ, կէս տարեկան 6 րոպ:
Առանձին համարները: 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի համարատու մէջ:

Փոստընդարձակութիւնը չիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը ըստ է առատօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Հայտարարութիւն խնամք չկայում են
խրատները ըստ 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ձորտուծիւն:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նա-
մակ Ղալարից: Նամակ խմբագրի: Ներքին լու-
րեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Աւարտ-Ուն-
գործ: Թիւրքիա: Անգլիա: Արեւելեան Բուսմի: Ա-
րաւստի լուրեր: — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ: — ՅԱՅԱՍ-
ՏԱՆԻ ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ: — ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ: Մի ու-
սանայի տեսութիւնները:

ՀՈՐՏՈՒԹԻՒՆ

Մինչև որ Ռուսաստանում
վերցրած է ձորտուծիւնը, մինչև
որ դատաստանը յայտնված է
հրապարակական, մինչև որ ամե-
նամեծ յանցաւորները, մինչև ան-
գամ թագաւորապանները իրա-
ւունք ունեն պաշտպաններ ունե-
նալ դատարաններում, — մեզա-
նում մի դասակարգ մնացել է
դեռ ևս կատարեալ ձորտուծեան
մէջ: Դա մեր քաջաններն են,
որոնք վարդապետների, կուսա-
կրօն հոգեւորականների, Լեւոնի-
նի ձեռքում կատարեալ ձոր-
տեր են, կատարեալ ստրուկներ
են:

Օրինակներ շատ կան: Առանց
քննութեան և դատաստանի Էջ-
միածինը, կամ թեմական առաջ-
նորդները կարող են անել քա-
ջանների հետ ինչ որ ուզում
են: Քաջանան, ամեն մարդկա-
յին, քաղաքացիական իրաւուն-
քից զրկված այդ մարդը, պէտք
է մեզ առաջնորդի, մեր դաս-
տիարակի լինի: Ինչպէս կարող
է նա մեզ բարոյապէս առաջ-
նորդել, մեզ դաստիարակել, երբ

ինքն մի ստրուկ է, մի անխօս,
ոչինչ մարդկային, քաղաքացիա-
կան իրաւունքներ չունեցող ա-
րարած է առաջին պատահած
կուսակրօնի ձեռքում, որ կարող
է նրան առանց որ և է պատ-
ճառի, առանց քննութեան և
դատաստանի ենթարկել ամեն
տեսակ պատիժներին, աքսորել
վանքը, զրկել աստիճաններից,
կարգից, ծուխից:

Եւ քաջանան, կատարեալ
ստրուկ լինելով կուսակրօնի ձեռ-
քում, ոչինչ եւլք չունի իր դու-
թեանց, ոչինչ միջոց չունի բողո-
քել կուսակրօն դատակարգի վայ-
րենի, անպայման, անսահման
կամայականութեան դէմ:

Մի և նոյն ժամանակ մենք
պաշանջում ենք, որ քաջանան
լինի մեր կրթիչ, մեր դաստիա-
րակիչ, մեր բարոյական առաջ-
նորդ: Կարո՞ղ է արդեօք ձորտու-
ստրուկը, մարդկային և քաղա-
քացիական իրաւունքներից զրկ-
վածը, մշտական կամայականու-
թեան ենթարկվածը, և բացի
սրանից մուրացկանութեամբ տա-
րողը լինել ազնիւ մարդ, լինել
անկախ բնաւորութեան տէր մարդ
և բարոյական ուսուցիչ լինել
ժողովրդի:

Ժամանակ է՝ արդեօք մոա-
ծել այդ ձորտուծիւնն էլ վերց-
նելու:

Ընթերցողի ուշադրութիւնը
գարձնում ենք մեր ներքին լու-
րերում տպված մի տեղեկութեան
վրա, որ շատ պարզ կերպով

պատկերացնում է Լեւոնի-
նի անսահման կամայականութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՐԻՑ

Մարտի 18-ին

Իմ առաջին նամակից յետոյ շատ ժամանակ
անցաւ: Մեզանում շատերը սպասում էին, որ
այս նամակի աւելիքը որ և իցէ յոգուած դուրս
կը գալ ուրիշ լրագրում, որովհետեւ ընթերցողը
սովոր է միշտ «Մշակի» յոգուածները դէմ յո-
գուածներ կարդալ: Այս բոլորը ի հարկէ վատ է,
որովհետեւ եթէ մի հարց կրիտիկայի տակ է ընկ-
նում, այն ժամանակ աւելի լաւ է քննվում, և
թէ միայն գրողները աշխատում են խիստ կը-
րիտիկայի տակ գցել յոգուածները յայտնած
մտքերը: Բայց դժբաղդաբար մեծ մասամբ հայե-
րը անկարող են աշխիւ կրիտիկայի միջոցով հեր-
քու կենսոյութիւն: Նորա գէնքը անգոր գէնք
է—գրաբարութիւնը, կամ թէ խելագարի հայտ-
յանքն է: Եթէ մէկը բարձրացնում է մի որ և իցէ
հարց, միւսը իր սուրբ պարտականութիւն է
համարում անպատճառ հերքել այդ հարցը, և ի
հարկէ չէ խնայում դորա համար ոչ մի անաղիւ
միջոց, ոչ գերդատանական կեանք, ոչ փիլի-
քական պակասութիւն: Եւ եթէ այս պակասու-
թիւնները չը կան, միթէ չէ կարելի ուրիշ տեսակ
կեղտոտել: Այս մի և նոյնը պատահեց և իմ նա-
մակի հետ:

Ոչ թէ իմ նամակի, այլ իմ դէմ դուրս եկան
դանաղան կեղտոտութիւններով երկու թղթա-
կիցներ Ղալարից: Պէտք է ասած որ երկուսն էլ
Ներսիսեան ուսումնարանի աշակերտներից են
և պէտք է խոստովանած, որ նոքա լաւ են ըմ-
բռնել հայոց կրիտիկայի ոգին: Այս պարտնիքը
ոչ թէ իմ յայտնած մտքերն են հերքում, ոչ
գործնք ցանկանում են հաստատել, որ ես տը-
գէտ, անաղիւ մարդ եմ և դուրա համար չեն խը-
նայում ոչ մի սրբութիւն, հարելով դանաղան
գրաբարութիւններ, և չը մտածելով որ եթէ ես
մինչև անգամ այդպիսի մարդ էլ լինէի, իմ յայտ-
նած միտքը դուրսնով չէ հերքվում:

Տեսնե՛ք ինչ է իմ գործած մեղքը. ես իմ ա-
ռաջին նամակում նկարագրել էի թէ ինչպիսի
վարժապետներ ունենք, մենք և նորանց դու-
թիւնը դաւաճեցնում և վերջապէս նկարագրել
էի մի քանի պատկերներ Ներսիսեան ուսումնա-
րանի նորաւարտ աշակերտների գործունէութիւ-
նից ուսուցչական ազդեցիկում և յայտնել էի
իմ կարծիքը նորանց ուղղութեան մասին, ցան-
կանալով որ նա փոխվի գէպի լաւը: Առէք,
խնդրեմ, ինչ մեղք կայ այստեղ. ես կարծում եմ
ամեն մի հայ նոյնը կը ցանկանայ: Այս դպրոցը
այնքան մեծ նիւթական միջոց ունի, որ կարող
էր լինել հայոց օրինակելի դպրանոց, ինչպէս մի
ժամանակ էր. այստեղ պէտք է կենսորոնացած
լինեն մեր բոլոր բարձր մանկավարժական ոչ-
մեր: Միայն դա կարող է ազդային ուսումնա-
րանների համար ուսուցիչների պատրաստել: Բայց
մենք ինչ ենք տեսնում. մեր ընտիր մանկավար-
ժական ոչմերը չեն կարողանում այս դպրանո-
ցում պաշտօն ստանալ և հարկադրված են դա-
ւաճեցնում ծառայել: Ո՞րք են մեր Մանդինեան-
ները, Զովհանէսեանները, Տէր-Ղևոնդեանները և
ուրիշները, ինչու նորանք չեն գործում Ներսի-
սեան դպրոցում, և ո՞վ է նորանց չը գործելու
պատճառը: Այս դպրանոցը ծաղկելու, զարգանա-
լու տեղ չեալ է գնում և հարկադրված է փակել
դատաստանները. նա զարգացած աշակերտների
տեղ բաց է թողնում Ղալարի թղթակիցներին պէս
պարտնիք, որոնցից մէկը մի աղայի մօտ ոչ-
խայնի է նայում, իսկ միւսը ազդային դպրո-
ցում բոլոր ու բակը է ծախում և նոյն աղա-
յի շնորհով այստեղ հաց է ճարում:

Միթէ մի ուսումնարան, որը կարող է տարե-
կան մինչև 50,000 րուբլ ծախսել, այդպիսի
անդամաւորներ պէտք է բաց թողնէ, որոնք
մի կտոր հարի համար հարկադրված են դանա-
ղան աղաների մօտ ծառայութիւն մտնել: Ո՞րք են
այն բարձր իրեւելները, որ նոքա պէտք է դուրս
բերէին մեր գլխաւոր ազդային դպրոցից: Մեր
կարծիքով Ներսիսեան ուսումնարանը իր նիւ-
թական ազանութեամբ կարող է և պէտք է
լինի մեր առաջին ազդային դպրոցը և մինչև
անգամ վարժապետանոց: Նորա մէջ այս րու-
պէս էլ կան գործող անձինք, որոնք շատ բան
կարող էին անել, եթէ նորանց չը խանգարէին.
և միթէ մենք, ինչպէս հայ, իրաւունք չունենք
խանգարող պատճառների դէմ բողոքել և ցան-
կալ որ նորանք վերցնեն իրանց մեռած թաթը

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՄԻ ՌՈՒՍԱԶԱՅԻ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թէ որչափ անհիմն մարդիկներից են կազմված
այժմեան ազգային զանազան գործող մարմին-
ները, օրինակ կը բերեմ երկու անցք: Մի ըն-
կերութեան մէջ ամենազգօն դեր կատարող մի
Պարոն ինձ ասում է. «Պ. Ն...», կարող եմ շնոր-
հաւորել Ձեզ, որ Ձեր առաջարկած «պրօքէն»
արդէն իրագործվեցաւ, որովհետեւ «Մասիս»
մէջ երկէ կարդացի թէ՛ Սովետոյ Մասնաժողովը
արդէն կարգադրել է զանազան տեսակ գիւղա-
ստանական պէտքեր հասցնել Հայաստան:
Ուրեմն տեսնում էք որչափ հեշտ է և Պարոնի
գործիչի համար վճռել Հայաստանի ներթափան-
բարութեան խնդիրը: Սովետոյ Յանձնաժողովը
կարգադրութիւն արեց ուղարկել այս ինչ տի-
ղեր այդպիսի հոռետեր և սերմեր, ուրեմն իրան
սեփական մտածելքը ու անելքը վերջացաւ և
Հայաստանի էկոնօմիկական դրութիւնը բարե-
փելու հարցը սպառվեց պրծաւ: Ի՞նչ էք պա-
հանջում դուք այսուհետեւ ազգի համար, երբ
այսպիսի պատանիներ են անօրինում նորա ա-
պագայի խնդիրը: Միւս ոչ պակաս գործօն Պա-

րոն ասում է. «Պ. Ն...», յիշաւի Ձեր արած
առաջարկութիւնը շատ լաւ բան է, բայց ում
ուղարկե՛ք Հայաստան ուսումնասիրելու հա-
մար:— Չը գիտեմ, պատասխանում եմ, այդ ձեր
գիտնալիքն է, երբ ձեր մարդիկներն ճանաչողը
դուք է: «Բայց հա, շարունակում է նա, շատ
հանգիստ կերպով, մենք կուղարկենք այս ինչ
Պարոնին» և տալիս է մի երիտասարդի անուն,
որը այնչափ է ձեռնհաս Հայաստանի էկոնո-
միքական դրութիւնը ուսումնասիրելու համար,
որ նա աւելի մեծ եռանդով կը պարապվի իր
քնթի վրա նստող ճանձերի պատմութիւններով,
քան թէ անտառ ցանկելու, պանիր շինելու,
ներկահատեր ցանկելու, տորօն հանելու, գորգեր,
կապերաներ և տարազներ գործելու ծանր և
խիստ մասնագիտական հարցերով: Ու-
րեմն ինչ, դարձեալ և Պարոնի երիտասարդ գոր-
ծիչը մի յորանջելով մտածեց և վճռեց Հայաս-
տանը ուսումնասիրելու միջոցը. այսպիսի դե-
րահաս մարդիկների ձեռքով կատարվող գոր-
ծունէութիւնը բէգիկ չէ հապա ինչ է...

Փոխանակ մտածելու կազմել մասնագէտ մար-
դիկներից բաղկացած մի յանձնաժողով՝ լոկ տե-
սական կերպով դեռ վիճարանելու ու մշակելու
այն լայն պրօքթամբ, որով պիտի հետազոտվի
Հայաստանը իր բնական հարստութեանց ու պա-
կասութիւնների հաշար ու մէկ կողմից, փոխ-
նակ ընտրելու նմանապէս բարձրագոյն ուսում

նոցանց մասնագէտ մէկը, որը լինի լոկ իրան
տուած պրօքթամբ ձիւղ կատարողը, և Պարոնի
երեխայ—գործիչը մի անգամից վճռում է բոլոր
խնդիրը, յիշեցնելով այն դերահաս մասնակը,
որը լսելով թէ աստղաբաշխները պարապում են
աստղների, ինքն էլ մատնուով թղթի վրա մի
ծամածած աստղ է նկարում և միամիտ ուրա-
խութեամբ բացականչում. «այդ ինչ դժուար
բան է աստղաբաշխութիւնը, որ մէկ էլ գնում
քսան տարի ուսում առնեմ դուրա համար»:
Ո՞րչափ «մեծ ապագայի» կարելի է հասնել
այսպիսի անպարաստ մարդիկներով, թող
դատէ ինքը ընթերցողը... Բայց զարմանալի
մի բան. և Պարոն մէջ, ուր տիրապետում է
խոհուն և լրջամիտ մարդիկների մի այսպիսի
ընդհանուր դարգակութիւն, հենց այս տեղ
միայն դուք կը գտնեք աւելի մեծամիտ, ինքը
նահաւան և իրանց «տաղանդով» փրկող մարդիկ,
քան թէ որ և իցէ մի ուրիշ տեղ: Հերթը է,
որ վանական պոռոտախօսի մէկը գրէ մի ան-
բովանդակ վիպասանութիւն» կոչված բան ու
ստանայ մի քանիսներից սովորական խաբեայ
չորդորթութիւն և անհա իրան կերակայէ
վիկտոր Հիւգօ, Վալթեր — Սկօտ, Դիկէնս,
Դանտէ, Միլտոն և ում ուղում էք. այդչափ
խնթանալով դեռ հերթը չէ, այլ նա դիտմամբ
կը սկսէ ստանալ Գիողէնէսի կամ Նիլա մար-
գարէի ձեռքը և կտրված գգալի պէս ամեն

հարցի մէջ խրվելով կը սկսէ ուղղութիւն տալ:
Միւսը կը գրէ օղային սիւնելի վրա հաստատ-
ված մի քանի ոսկեզօծ նախադասութիւններ,
կը համեմէ նոցա ի դէպ կամ յանգչալ անշուշտ
վիկտոր Հիւգօյից արտադրած մի քանի թղթա-
ներով, տպել կը տայ այդ թուղթիկ նախադա-
սութիւնների անկապ շարուածը, և անա նա էլ
կը սկսէ օրը հինգ անգամ կրկնել մտքի մէջ
«հա, ըստ էս ալ հեղինակ ոմն եմ»:

Հարցնում եմ, ընթերցող, ինչ գործ կարելի է
առաջ տանել այսպիսի Տօնքիչտաների ձեռքով.
արդեօք ծաղրալի չէ, երբ մարդ կարդում է լրա-
գիրների մէջ թէ՛ այս ինչ ընկերութիւնը այս
ինչ «մեծ գործ» պիտի կատարէ, այն ինչ ընկե-
րութիւնը այն ինչ «մեծ գործ», իսկ բոլորը
միասին այնչափ պիտի կարողանան բաղադրու-
րել Հայաստանը, որ ոչ միայն հայերը պիտի
մարդ դառնան, այլ և քրդերը և չէրքէդ-
ները, և գուցէ ժամանակով էլ շատ տեսակ տար-
սափելի չորքտանիք: Մէկը ասէ՛ նախ քան
քրդերներին և չէրքէդներին մարդ չիմելու վրա
մտածել, լաւ չէր լինի, որ նախ դուք ինքներդ
սովորե՛ք մարդավարի վարվիլ ձեր միարին և
միաբարբառ հարազատ եղբայրների հետ, որ ձեզ
համար դժբախտութիւն են ունեցել ընդունել կա-
թօլիկ, օրթոդօքս և բողոքական կրօնները: Ի՞նչ-
պէս էք վերաբերվում դուք դէպի ձեր այդ եղ-
բայրները. հաւատար աչքով էք նայում և հաւա-

մեր ազգային դպրանոցից, որը մեծ նշանակու-
թիւն կարող է ունենալ մեր ազգային դարգաց-
ման մէջ. Այս է մեր կարծիքը: Իսկ զրոյններին
խորհուրդ կը տայինք որ չը ստորացնեն հայոց
մամուլը, և հարցերը քննելու տեղ չը ցնխոտեն
հարց բարձրացնողներին: Միթէ լրագրի նշանա-
կութիւնը պ ա ս կ վ ի լ ի ն ե ռ գրելն է: Ուրիշին
ցնխոտելը շատ հեշտ է և դուրս համար մեծ
խելք չէ հարկաւոր և դուրսում չէ, մեր կարծի-
քով, լրագրի նշանակութիւնը: Եթէ մենք ուրիշի
պատիւը ոչինչի տեղ չենք դնում, գոնէ պահ-
պանենք մեր հայոց մամուլի պատիւը:

Իսկ ինձ անձնապէս զրպարաւորներին եւ ինձ
համար ստորութիւն են համարում պատասխա-
նել:

Կիւրի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բարձրուշ, 8 մարտի

Լրագրաց մէջ կարդալով Տաճկաստանի հայերի
դաւան և վշտալի գրութիւնը և աղետալի սովը,
չարժված մարդկային զգացմունքից և ազգու-
թեան գաղափարից՝ չը մնացին անտարբեր Բար-
ժուշում գտնվող հայ վաճառականները, դավ-
րեմեցիք, շուշեցիք, ազուլեցիք և մի գանձակեցի
և չը խնայեցին իրանց լուսման օգնելու իրանց
սովաւրել եղբարց և քերք:

Նամակիս մէջ կը գտնէք նուիրած 393 բուրլ
գումարը հանդերձ յարգոյ նուիրատու անձանց
անուններով, որ կը խնդրենք յիշեալ գումարն
առաքել ուր հարկն է և անուններն «Մշակի»
մէջ տպագրել ի տեղեկութիւն նուիրատուաց:
Միւրապ Գ. Աւթանդիլեանց 40 ռ., տիկին Նազ-
լու Աւթանդիլեանց 12 ռ., օրիւրդը Զուրուիթ և
Իսկուհի Աւթանդիլեանց 8 ռ., Յակօբ Ղարախա-
նեանց 19 ռ., Յակօբ Տէր Յակօբեանց 19 ռ., Համ-
բարձում Նազարեկեանց 20 ռ., Մաթէոս Զով-
սեփեանց 20 ռ., Արզուման Տէր-Զովհանէսեանց
7 ռ., Ոմն անյայտ 7 ռ., Բալայ և Աւագ Զարու-
թիւնեանց 10 ռ., Գարբիէ Տէր-Զաքարեանց 10 ռ.,
Միքայէլ Աղաբարեանց 8 ռ., Գրիգոր Տէր Յակ-
բեանց 10 ռ., Մովսէս Յակօբեանց 8 ռ., Մկր-
տիչ (Յակօբեան) Գալստեանց 1 ռ., Ա. Ա. 1 ռ.,
Արտաշէս Առաքելեանց 100 ռ., Կարապետ Իս-
կանդրեանց 20 ռ., Վասիլ Բարութեանց 5 ռ.,
Գէորգ Բախտեանց 19 ռ., Գէորգ Արեւանց 6
ռ., Գործակատար Տէր Օհանեանց Թաթէոս Բա-
լաբարեանց 30 ռ., Կարապետ Բունեակեանց 6
ռ., Սիմէոն Ամարեանց 7 ռ.: Գումարն է 393 ռ.:

Գ. Աւթանդիլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԻՍԻՑ մեզ գրում են: «Մեր
կարծիքով ահա ինչ պէտք է լինի մեր նորըն-
տիր հոգաբարձուների գործը հնարի անտարբե-
ր»

սար ուղարկութեամբ հոգում դուք նոցա յա-
ռաջարկութեան համար եւ, թէ «Ստամբուլ բուր-
վառ», «Պոլսը կարած», «Կարմիր ականջ» և չը
գիտեմ էլ ինչ յիմար և անվայել ածականներ
գործածելով դուք թունաւորում էք ձեր հարա-
գատ կրտսեր եղբայրների սիրտը և այդպիսով
հեռացնում նոցա ընդհանուր ազգային ասպարի-
զից... Ուրեմն փոխանակ «մեծ ապագայի» վրա
խօսելու, լաւ կը լինէր նախ որ դուք մտածէիք
ձեր ամենատարրական մարդկային և բարոյական
պարտաւորութիւնների վրա: Չեն տսիլ ձեզ թէ
ինչ երեսով էք դուք ձեզ համար ընդարձակ ի-
րաւունքներ պահանջում, երբ դեռ խանձարուրի
մէջ ալիզափ ստոր զգացումներ էք յայտնում գէ-
պի ձեր արիւնակիցները, ահա սուր համար մը-
տածեցէք նախ, իսկ յետոյ զանազան Գօնքիջո-
տային բառերի և ֆրազների ետեւից ընկնելու
վրա:

Ամեն քայլափոխում, իւրաքանչիւր տողի մէջ
դուք մէջ էք բերում մեծ մեծ մարդիկների ա-
նունները և աղաղակում էք. «Կեցցէ Ֆրանսա»,
«Կեցցէ Վիկտոր Զիւգօ» և այլն: Թշուառ մարդիկ,
ինչ սովորեցիք դուք Ֆրանսիայից կամ Վիկտոր
Զիւգօյից, որ այդչափ յափշտակվում էք և ամեն
մեծ ու յառաջադէմ ազգերի թոււմ դուք էլ ա-
ղաղակում էք. «Ֆրանսա, սքանչելի Ֆրանսա»:
Մէկը հարցնէ, մտածում է ինքը «սքանչելի Ֆր-
անսան» և «մեծն» Վիկտոր Զիւգօ ձեր թշուա-

րութեան տեղ. ա). Աշխատել որքան հնար է
չուտ ստանալ ուսումնարանի հիմնադրամը և
նրա անունով բանկը գցել, որ այժմեան հոգա-
բարձուների համար շատ հեշտ բան է, եթէ նը-
րանք հասարակական շահը աչքի առաջ ունե-
նան և ոչ թէ անձնականը: Բ) Աշխատել ամեն
միջոցներով հիմնադրութիւնը թիւը աւելացնել, որի
միջոցներից մէկն էլ կարող է լինել փոքր վճա-
րով հիմնադրի ընդունելը: Գ) Ուսումնարանի
նիւթական գրութիւնը բարելաւելու համար դա-
նազան աղբիւրներ գտնել, որոնցից, առ այժմ,
միայն երկուսը կը յիշեմ՝ պակագրամը ուսում-
նարանին յատկացնելու, որ հոգաբարձուներից
մէկը, պ. Արաքսեանեանց կարող է աջակցել,
եթէ կամենայ, և ուրիշ կողմից աշխատել կտակ-
ներ հաստատելու ուսումնարանի անունով: Զար-
մանալի է. Ագուլիսի ուսումնարանը մօտ 30
տարի է որ գոյութիւն ունի և հոգաբարձուները
ոչ մի անգամ չաշխատեցին նրա անունով կտակ
հաստատել տալու: Նոր ընտրված հոգաբարձու-
ների ուղարկութիւնը դարձնում ենք այդ խնդ-
րի վրա»

Ապրիլի 1-ից մինչև 15 ապրիլի ԹԻՖԼԻՍԻ
միջերկրի գնները հետեւեալ տակաւում կը
ծախվին: Թիւած հացը ցորենի ալիւրից առաջին
տեսակի, Ֆունտը 5 1/2 կօպէկ, երկրորդ տեսակի
4 կօպ. Թոնրի մէջ թիւած հացը առաջին տե-
սակի Ֆունտը 6 կօպ., երկրորդ տեսակի 4 1/2
կօպ.: Լաւաշներ առաջին տեսակի 7 կ. Ֆունտը,
երկրորդ տեսակի 5 1/2 կ., երկրորդ տեսակի 5 կ.:
Տաւարի մսի Ֆունտը առաջին տեսակի 12 կ.,
երկրորդ տեսակի 10 կ., սուկի 18 կօպ.:
Ոչխարի մսի Ֆունտը 14 կ., խոզի մսի Ֆունտը
14 կօպէկ: Այդ տակսան չէ վերաբերվում այն
զիւղական արդիւնաբերողներին, որոնք իրանց
արդիւնքները ծախում են Թիֆլիսի հրապարակ-
ների և վաճառանոցների վրա:

ԶԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են որ այդտեղի
փոստատան կառավարիչը սովորութիւն ունի
փոստը եկած ժամանակ լրագրի ստացողներին
ժամբով սպասել տալ փոստատան դրան առջև,
մինչև ինքն լրագրներ է կարդում: Նա ինքն ոչ
մի լրագիր չէ ստանում, բայց շատ սիրում է
կարդալ, այդ պատճառով կարգում է ուրիշների
լրագրները: Իսկ լրագիրների տէրերը ժամբով
սպասում են անհամբերութեամբ:

Մարտի 8-ին ՍՂՆԱԽԻ հայոց Ս. Կարապետ
եկեղեցում ժողովուրդը երգվեց նոր Թագաւո-
րին: Արշակ քահանայ Տէր-Ստեփանեանց թվե-
լով հանգուցեալ Կայսրի արած բոլոր բարեա-
րութիւնները, այնուհետև նոր Կայսրի մասին
խօսելով աւելացրեց. «Հայոց ազգի յատկանիշ-
ներից առաջինն այն կարող է համարվել, որ
հայը ամենայն տէրութեանը, որի հպատակ է
եղել, միշտ հաւատարիմ է եղել, ուրեմն մենք
եւ հետեւելով մեր նախորդների օրինակին երդ-
վենք Աստուծու սեղանի առջև մեր Թագաւորին

ուրիշների վրա, որ դուք լարախաղացի մի-
մոսի նման ձեր այնչափ խոր սեփական վիշտը
թողած չկեցցէ սքանչելի Ֆրանսա» էք պոռում:
Լաւ, հենց դիցուք թէ դուք իրաւունքով էք յա-
փշտակվում Ֆրանսիային և Հիւզօյով, այդպիսի
դէպքում՝ փոխանակ ապագրիւն պօսալու սըր-
ճարաններում, լաւ չէր լինի եթէ Վիկտոր Զի-
ւգօյի տարեգրածի օրը դուք մի մարդավարի ու-
ղերձ գրէիք նորան, որով երես պարզ կանէիք
ձեզ և հայերին, քան թէ ձեր լարաններում
դարգաւ պօսալու. «Կը սիրեմ զքեզ Ֆրանսա» և
այլն: Տեսնում էք, որ ամեն գործի մէջ դուք
միայն Գօնքիջոսի դեր էք կատարում... Նրկու
ամիս մեր մէջ ապրելով ձեզից ոչ մէկից եւ
չը լսեցի որ առաջը ինքնուրոյն միտք, մի սե-
փական ինքնատիւ չէ: Նոյն որ ձեզ հետ մարդ խօ-
սելու լինի, իսկոյն կը լսէ. «Մեծն Մօնտէսքիոյ
կըսէ կոր», «մեծն Լամարթիլ կըսէ կոր», «մեծն
Գիլգո կըսէ կոր»: Դժոխ լաւ, շատ գեղեցիկ բանն
են ստած մեծ մարդիկ իրանց հայրենեաց փառ-
քը մեծացնելու համար, հապա դուք էլ ինչու
մի մարդավարի բան չէք ստում (եթէ չէք կարող
կատարել) ձեր սեփական վշտահար հայրենիքի
համար... բայց ոչ, ներողութիւն, մի բանի մէջ
դուք շատ ճարպիկ էք և չնորք ունեք, այն է
միմեանց չորհրդորթելու, միմեանց խաբելու և
փոս փորելու մէջ. այս բանում դուք շատ խելօք
էք՝ չը նայելով ձեր Տօնքիջոսութեան:

միշտ հաւատարիմ լինելու: Երգման թերթը
թէ և ժողովրդի համար անհատականալի գրաբառ
լեզուով էր գրված, բայց տէր հայրը թերթը
ձեռքին բռնած, աշխարհաբառ լեզուով էր ար-
տասանում խօսքերը, որպէս զի ժողովուրդը
լաւ հասկանայ իր տուած լեզւման իմաստի
բովանդակութիւնը:

ԱԳՈՒԻՍԻՑ մեզ գրում են: «Զարմանալի է
ազուլեցիների անհոգութիւնը: Երբ սպանու-
թիւնը լինում է, միայն այն ժամանակ գիշերա-
պահները բազմացնում են: Իսկ անցնում է մի
քանի օր,— ոչ մի գիշերապահ չէք գտնի ամ-
բողջ Ագուլիսում, որովհետև սպանութեանից
գործած ազաւորութիւնը շնչվում է ազուլեցի-
ների յիշողութեանից: Այդպէս էլ եղաւ. փետըր-
վարի 27-ից յետոյ, երբ սպանվեցաւ սուրբ
Շմաւոն եկեղեցու ծերունի Սիմէոն քահանայ:
Այն օրից յետոյ քանի մի ժամանակ գիշերա-
պահներ ունէինք, իսկ այժմ կրկին անհետացել
են»:

Ապրիլի 1-ին վերջապէս ստացվեցաւ Ռուսաս-
տանի փոստը Թիֆլիսում:

«Русский Курьер» լրագրին հեռագրում են
որ Ռոմի քաղաքում դիտաւորութիւն կայ հիննել
մի տեխնիկական դպրոց:

Նոյն լրագրին հեռագրում են Ս. Պետերբուր-
գից որ բանտային վարչութիւնը կենթարկվի այ-
սուհետև արդարադատութեան միջխառնութեան
իրաւաւորութեանը:

«Новости» լրագիրը լսել է որ վերջին օրերս
Ս. Պետերբուրգում կանգնեցրած դատաւա-
ն երբ կրկին դիտաւորութիւն կայ վերցնելու:

Ս. Պետերբուրգի մի քանի եկեղեցիներում,
ինչպէս հաղորդում են ռուս լրագիրները, աղա-
մարդկանց հետ միասին երգվում էին և կանայք
իրանց սեփական կաթով:

Հաստատ աղբիւրներից իմացանք, որ Յովհան-
նէս աւագ քահանայ Սարգսեանից էլմիմայինը
կամայական կերպով խել է և աւագ քահանայու-
թեան տնօրէնը և յայտնել է նրան հասարակ
քահանայ: Ինչ յանցանք է գործել այդ աւագ
քահանայ,— յայտնի չէ: Եւ եթէ յանցանք էլ
գործած լինէր, կարելի է միթէ առանց քննու-
թեան, առանց դատաստանի պատժել մարդուն
կամայական կերպով: Եւ չը մոռանանք որ Սար-
գսեան աւագ քահանայն անշնչա քահանաներից
չէ: Նա եղել է խոստովանահայր Յովհաննէս կա-
թողիկոսի, Ներսէս կաթողիկոսի, Մատթէոս կա-
թողիկոսի և վերջապէս այժմեան կաթողիկոս
Գէորգն էլ նրա մօտ խոստովանվել է: Աւագ
քահանայութիւնը նա ստացել է Ներսէս կաթո-
ղիկոսից: Երբ որ տէրութիւնը մի գեներալին
նորաւոր է դարձնում՝ մի որ և է յանցանքի հա-

Ուրեմն մեր խօսքը դարձեալ «մեծ ապագայ»
պատրաստող ընկերութիւնների վրա է. շատերը
այդ ընկերութեանց մէջ մասնակցողներից գուցէ
կան. «է՛հ, շատ հարկաւոր է որ Ռուսահայերը
կարող էին մեզ հարկւր հազար բուրլ ուղարկել,
իսկ այժմ չեն ուղարկի, մենք մեր սեփական
ուժերով գործը յառաջ կը տանք»: Այո՛, եւ
շատ լաւ գիտեմ, որ Կ. Պօլսի Հայը միլիոն ու
կէս եղբայրների բարոյական և մտաւոր համե-
րաշխութեան ոչինչ գնահատութիւն չէ կարող
անել, այլ նա ամեն բան կը չափէ և կը գնա-
հատէ միայն պատրաստ դրամով: Կը հարցնեմ
հասկացողներից, քանի միլիոն բուրլ կարժէ
հապա այն բարոյական գրգռում, այն տաք եւ-
ռանդը, այն հաւատը, որը կարողացել է յարու-
ցանել կորովի Ռուսահայ մամուլը միլիոն ու
կէս անտարբեր ու խորթացած Ռուսահայերի մէջ
դէպի իրանց Տաճկահայ եղբայրները. չէ՞ որ հա-
րիւր հազար բուրլ կորցնելով Կ. Պօլսի ընկերու-
թիւնները կը կորցնեն այդ անգին բարոյական
կապերը եւ: Բայց ինչ եմ ասում, միթէ՞ Կ. Պօլ-
սի Հայը բարոյական կապի կը հասկանայ. նո-
րան միայն աւել «ես քեզ կը տամ այսչափ
գրուչ» պրծաւ գնաց, նորա գլխին էլ ինչ աւե-
տարան կարգալ է հարկաւոր, երբ նորա գլուխը
ոչինչ չի մտնի, մինչև որ աչքերը դուռ չը տես-
նեն...:

Բայց թող մի բան իմանան Կ. Պօլսի կար-

մար, դարձեալ ենթարկում է նրան դատաստանի,
բայց ոչ թէ կամայական կերպով, առանց քննու-
թեան աստիճանից գրկում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՌՏՐՈՒՆԻԳԱՐԻԱ

Աւստրիական պարլամենտը բացվելու ժա-
մանակ մարտի 29-ին պարլամենտի նախա-
գահը ասաց հետեւեալ ծառը: Հերթական
հարցերը քննելուց առաջ եւ ձեռնից
թղթաւորութիւն եմ խնդրում մի քանի խօսք
ասել: Մեր վերջին նիստի կայանալուց յե-
տոյ հարեան պետութեան մէջ այնպիսի
սարսափելի անցք պատահեցաւ, որ վրդու-
վեցրեց ամբողջ Եւրոպային: Այն ստոր եւ-
դեռնագործութիւնը, որին զոհ գնաց Կայ-
սըր Ալէքսանդր II-ը, այն եղեռնագործու-
թեան սարսափելի մանրամասնութիւնները,
դաւադրութեան ընդարձակ չափերը քո-
ղարկում են մեր ժամանակի պայմանները և
զղուելի են դարձնում հասարակութեան և
կարգապահութեան թշնամիների ձգտում
ները: Այդ եղեռնագործութիւնը ամօթ է
բերում մարդկութեանը և ընդդէմ է այն
սկզբունքների, որոնց միշտ յարգում է մեր
ժողովը և որոնց պաշտպանութիւնը մեր
նպատակն է: Այդ չարագործութիւնը միա-
տեսակ վրդովում է մեր ժողովի անդամնե-
րից իւրաքանչիւրի զգացմունքները: Այդ
նախագահութիւնը այնքան զօրեղ է և
մեր ժողովը այնքան զգում է իր զգաց-
մունքներին հասցրած այդ վիրաւորանքը,
որ նրա համար դժուար չէ արտայայտել
այդ զգացմունքները: Ուրեմն եւ ժողովի
դիտաւորութիւնը կատարած կը լինեմ,
եթէ կը յատնեմ այն զգացմունքները, որոնք
մեզ պատել են: Հրաւիրում եմ ձեզ ի նը-
կատի առնել մեր սիրելի Թագաւորի վըր-
դովմունքը, որից մահը խելց նրա հաւա-
տարիմ բարեկամին և, ոտքի կանգնելով,
յայտնել ձեր ցաւակցութիւնը: Ժողովի
անդամները ոտքի կանգնեցին և այնուհե-
տե ժողովը անցաւ հերթական հարցերի
քննութեանը:

ԹԻՐԻԲԻԱ

Կ. Պօլսից լրագիրներին հաղորդում են
հետեւեալը: Յունական խնդրի խաղաղ ձա-

ծեցեալ գործիչները. եթէ նոքա կարհամարհն
ինչպէս մեր նիւթական նպաստները, այնպէս և
բարոյական ու մտաւոր համեմալութիւնը, այն
ժամանակ մենք կը դիմենք մի միջոցի, որով Կ.
Պօլսի գործիչները ոչ միայն կարված կը մնան
մեզ հետ, այլ եւ իրանց բոլոր գործունէութեան
հետ, այդ միջոցը այն է, որ Ռուսահայ մամուլը
կը սկսէ իր ընթերցողներին սիրտը, միտքը ու
բոլոր նպատակները փոխանակ դէպի Կ. Պօլսի
ուղղելու, ուղղել անմիջապէս երեսնի ու Ա-
լէքսանդրապոլի վրա վան ու խրդում, որտեղ
ի դէպ կան և հաստատուած ընկերութիւններ.
մենք կը սկսենք ուղղակի յարաբերութիւն այդ
ընկերութիւնների հետ, որոնք գործում են նոյն
իսկ Հայաստանի հողի վրա, աչքի առաջ ունե-
նալով նորա բոլոր նիւթական ու բարոյական
պէտքերը: Հետաքրքիր է՝ ինչ կանեն այն ժա-
մանակ Կ. Պօլսի ընկերութիւնները. նոքա կը
չարունակեն թիւթիկացնել սուրա նորա դուռը
պարահանդէսի համար մինչև որ իրանց վըր-
թիւնի նոցա Բօսֆօրի քամիների մէջ պոռալ,
«Կեցցէ՛ մեծ ապագայ», «Կեցցէ՛ սքանչելի Ֆրան-
սա» և այլն:

Հետեւալ անգամ կը խօսեմ Կ. Պօլսի կա-
նանց և օրիորդաց ընկերութիւնների հետ:

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈԼՈՍԵԱՆ

Համար: Սկզբից մասնաժողովը պետք է
ևս ունենա՞նք մի քանի անգամ քննարկել և
հարկադրաբար հայեացքները: Այդ
պատճառով կը սկսի քաղաքական այնպիսի օրէնք-
ներ հրատարակել, որոնք համեմատ լինեն
ժողովրդի իրաւաբանական հայեացքներին
և արտայայտեն այն կանօնները, որոնք
գործ են դրուած իրական կեանքի մէջ:
Քրէական օրէնքների վերաբերութեամբ մաս-
նաժողովը մտադիր է օգուտ քաղել եւրո-
պական օրէնքներից, որովհետեւ քրէական
օրէնքները ընդհանուր, կոմպոզիտական
բնուորութիւն ունեն:

Մասնաժողովի գործը բաւական դժուար
է, որովհետեւ նա օրէնքներ պետք է ըս-
տաւորէ մի ժողովրդի համար, որ, թէպէտ
դեռ եւս նահապետական կեանքով է ապ-
րում, բայց որ պահանջ ունի ծանօթանալ
եւրօպական իրաւաբանութեան սկզբունք-
ների և գիտնական թէօրիաների հետ:

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Փարիզից գրում են որ հանրապետութեան
նախագահ և արտաքին գործերի մինիստր Բար-
տեմին Սէնտ-Ելէք աչցելութիւն գործեցին աւս-
տրիական կայսրուհուն որ իջաւ Բրիւսելեան
հիւրանոցում:

— Փարիզում ապրող բուլնական ուսանող-
ները մի ժողով կազմեցին, որտեղ բողոքեցին
Բուլնիա թագաւորութիւն յայտնելու դէմ և
ցանկութիւն յայտնեցին տեսնել ապագայում
հանրապետական Բուլնիա:

— Եւրոպայի հաղորդում են որ 70,000 ալբան-
ցիներ, զիտաւորութիւն ունեն արշաւել դէպի
Սլաւոնիկ, եթէ կաշտնաւորված արանցիների
առաջնորդները ազատութիւն չը ստանան:

— Վիեննայից հաղորդում են որ Վրկա կղզու
վրա պատրաստվում է մի ապստամբութիւն:

— Անգլիան պահանջում է Ամերիկայից որ այդ
վերջինը յանձնի իրան այն յանցաւորին, որ զի-
տաւորութիւն ունէր ձայնեցնել Եւրօսի լօրդ-
մէրի տունը և որ փախել Ամերիկա:

— Նիդրլանդներ, որտեղ կաշտնաւորվեցան
Եասսայի մէջ, Բուլնիայում, զիտաւորութիւն
ունէին յայտնել հանրապետութիւն Բուլնիայում:

— Իտալական լրագիրներում, ինչպէս հաղոր-
դում է «ПОРЯДОК» լրագիրը, տպկեցաւ Գարի-
բալդի մի նամակ, որ իրանք լրագիրները կեղծ
են համարում: Այդ նամակի մէջ Գարիբալդի իբր
թէ այն միտք է յայտնում, որ թագաւորապաշտ-
ները, առհասարակ, ազգերի բարեկամներ են,
միայն իրանք ազգերը դեռ լրանց բարեբարե-
րին չեն ճանաչում:

— Ֆրանսիայից շարունակում են գործեր ու-
ղարկել դէպի Ալժիր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՐԱՎԱԳՐԱԳԻՐՆԵՐ ԵՒ ԿՆԵՐՈՒԹՅՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԻ, 1 ապրիլի: „Правит.
Вѣстн.“ լրագիրը հաղորդում է „Земет-
во“ լրագրի № 17-ի ներքին տեսութեան
բաժինը և „Голосъ“ լրագրի № 90-ի
առաջնորդող յօդուածը պարունակում են
անիրաւացի և աններիկ քննադատութիւն
պետական բարձր պաշտօններ վարող ան-
ձանց գործունէութեան: Ներքին գործերի
մինիստրը որոշեց յայտնել „Земетство“
լրագիրը առաջին և „Голосъ“ լրագիրը
երկրորդ նախադասութիւն: Լրագրական
լուրերը ճայթփող նիւթերը պատրաստելու
և Մեծ Իշխանուհի Մարիա Նիկոլայիվնայի
պալատի քիմիական գործարանի մէջ եղած
կապի մօտայն պաշտօնագետ հերքվում են:
Հրատարակված է նոր կանօնադրութիւն
Թիֆլիսի ակնուականների կալուածական
բանկի, որին թոյլ է տուած պարտքեր
տալ այնպիսի գրաւական թերթերով, որոնք
ապահովում են դրաւ դրած անշարժ կայ-
քերի փոխադարձ պատասխանատուութեամբ:
Այլ ձևի գրաւական թերթերով պարտքե-
րի տալը դադարեցրած է:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՐՈՒ ԱՐԾՐՈՒՆԵՐ

